<<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության
ազգային կենտրոն>> ՓԲԸ
ք. Երևան Ֆանարջյան փ. 76 շ.

17 մարտի 2018 թ.
ժամը 11⁰⁰

թիվ՝ 4

Արձանագրություն

*«ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-18/19» ծածկագրով գնման ընթացակարգի*

*գնահատող հանձնաժողովի նիստի*

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝

**Գնահատող հանձնաժողովի նախագահ**
/տնտ. ծառ. պետ/ ԳՊ/ԳԱՊ Տիգրան Բեգոյան
***անդամներ***
/գլխ. հաշվապահ/ ԳՊ/ԳԱ Շուշանիկ Անանյան
/ինժիներ. խմբ. ղեկ./ ԳՊ/ԳԱ Պետրոս Նադիրյան
/հաշվապահ/ ԳՊ/ԲԱ Նվարդ Դավթյան
/անվտ. ինժեներ/ ԳՊ/ԲԱ Սլավիկ Հայրապետյան
**Հանձնաժողովի քարտուղար՝**
ԳՊ/Միմ Հարություն Օհանյան

*ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված*

**Հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին**

*Հանձնաժողովի նախագահ Տ. Բեգոյան*

1. **Ընդունել ի գիտություն որ՝**

1.1 Գնահատող հանձնաժողովի քարտուղար Հ. Օհանյանը Կարգի 43-րդ կետի և գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.13-րդ կետի պահանջներին համապատասխան ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կատարել է հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և Ֆինանսկան միջոցներ որակավորման չափանիշի առկայության վերաբերյալ.

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն սահմանված ժամկետում կատարված հարցման վերաբերյալ տրամադրել է եզրակացություն:

2. **Առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցների որակավորման չափանիշների համապատասխանության գնահատման մասին**

2.1 Հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետի դրույթները և Մասնակցի կողմից հրավերով սահմանված, որակավորման չափանիշների առկայությունը հիմնավորելու նպատակով ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ հանձնաժողովի անդամների տրված գնահատման թերթիկները (կցվում են). գնահատող հանձնաժողովը որոշեց

- Տրանս-Սֆեր ՍՊԸ-ի որակավորման չափանիշները գնահատել բավարար

Ընդունել որոշում կողմ ***5 (հինգ), դեմ 0 (զրո)***

3 **Ընտրված Մասնակից ճանաչելու և անգործության ժամկետ սահմանելու մասին**

3.1 Հաշվի առնելով գնահատող հանձնաժողովի՝ առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած Մասնակիցների վերաբերյալ կայացված որոշումը և Մասնակցի որակավորման չափանիշներին և առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի համապատասխանությանը հրավերի պահանջներին, գնահատման թերթիկներով տրված գնահատականները, Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց՝

կողմ ***5 (հինգ), դեմ 0 (զրո)*** ձայներով.

**գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ Տրանս-Սֆեր ՍՊԸ-ին**

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել 5 /հինգ/ օրացուցային օրը:

**Գնահատող հանձնաժողովի նախագահ**
/տնտ. ծառ. պետ/ ԳՊ/ԳԱՊ *Տիգրան Բեգոյան*

***անդամներ***
/գլխ. հաշվապահ/ ԳՊ/ԳԱ Շուշանիկ Անանյան

/ինժիներ. խմբ. ղեկ./ ԳՊ/ԳԱ Պետրոս Նադիրյան

/հաշվապահ/ ԳՊ/ԲԱ Նվարդ Դավթյան

/անվտ. ինժեներ/ ԳՊ/ԲԱ Սլավիկ Հայրապետյան

**Հանձնաժողովի քարտուղար՝**
ԳՊ/*Միմ* Հարություն Օհանյան